ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀ ՔՆ ԲԸԱՀ-ԱՊՁԲ – 12/18

«04» դեկտեմբեր 2012թ | ք.Երևան

ՀՀ քաղաքաշինության նախարարությունը, ի դեմս նախարարության աշխատակազմի ղեկավար Մասիս Բաղդասարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «Անթ Հիլլ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Վաճառող), ի դեմս տնօրեն Տ.Զոհրաբյանի մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում (հավելված N 2) Գնորդին մատակարարել սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված գրասենյակային նյութեր և հագուստ (այսուհետ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը, և վճարել դրա համար (հավելված 3):

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին՝ նրա կողմից նշված հասցեով:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդը իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 (տասնհինգ) օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը,

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը,

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը:

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու սույն Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից,

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը,

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում սույն Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով:

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն Պայմանագիրը:

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 (տասնհինգ) օրից ավելի:

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարելու վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը:

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայմանագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Սույն Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն Պայմանագրի 3.1.2 բ) և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը;

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.10 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1. Սույն պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է 134 950 (մեկ հարյուր երեսունչորս հազար ինը հարյուր հիսուն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը՝ նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 3 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2012թ. դեկտեմբերի 25-ը:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ

Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Վաճառողը Ապրանքի հանձնման ավարտից հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 4):

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

6.4 Ապրանքը Գնորդի կողմից ընդունված է համարվում երկկողմանի հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրելու պահից:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և սույն պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից սույն Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Վաճառողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով՝ առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է սույն Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը:

9.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունների՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.7 Պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի,

2) Պայմանագրով նախատեսված Ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցնելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

9.8 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.9 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի NN 1, 2, 3 և 4 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.10 Պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10 ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԳՆՈՐԴ

ՀՀ քաղաքաշինության նախարարություն
Հասցե՝ *Կառավարական տուն թիվ 3*
հh *900011014397, ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն*
հվhh *02565827*

________ Մ. Բաղդասարյան

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Անթ Հիլ» ՍՊԸ
Հասցե՝ *ք.Երևան, [illegible] 1 շենք, բն.34*
հh *1930032781440100, [illegible] բանկ» ՓԲԸ*
հվhh *00254055*

________ Տ.Զոհրաբյան

Կ.Տ

Հավելված 1
«04» 12 2012թ. կնքված
N ՀՀ ՔՆ ԲԸԱՀ-ԱՊՁԲ-12/18 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Կառավարման տարածքային մարմնի անվանումը՝ ***ՀՀ քաղաքաշինության նախարարություն***
Իրականացվող ծրագիրը՝ ***01. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ, Բաժին 11, խումբ 01, դաս 01***
Ծրագիրն իրականացնող հիմնարկի անվանումը՝ ***ՀՀ քաղաքաշինության նախարարություն***
հասցեն՝ ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3

Ապրանքի անվանումը՝ ***Գրասենյակային նյութեր և հագուստ***

հ/հ	Ձեռքբերվող ապրանքների	
	Անվանումը	Նկարագիրը
1	1	2
1.	Կրիչ (ֆլեշ 16GB)	ՈՒՍԲ ֆլեշ, 16 Գբ հիշողությամբ (USB Flash Drive 16 Gb)
2.	Թուղթ օֆսեթային	Թուղթ օֆսեթային N1, բարձր որակի A4 (210x297) մմ ձևաչափի, 1 մ² թղթի զանգվածը՝ 70-ից մինչև 80 գ, մեքենայական հարթությամբ, չկավճած, սպիտակությունը 80%, փաթեթավորումը ֆիրմային թղթափաթեթով կամ տուփերով, յուրաքանչյուրում 500 թերթ, փաթեթի քաշը՝ 2.5կգ, ԳՕՍՏ 9094-89 կամ համարժեքը:
3.	Թղթապանակ ռեգիստրատոր	Թղթապանակ ամուր ստվարաթղթե կազմով, պլաստիկ շապիկով, (350x290) մմ չափերով, մինչև 100մմ բարձրությամբ, ամրացումը՝ մետաղյա հարմարանքով, A4 ձևաչափի փաստաթղթերի երկարատև պահպանման համար:
4.	Թղթապանակ պլաստիկ	Թղթապանակ (310x230) մմ չափերով, A4 ձևաչափի թերթերի համար, տարբեր գույների պլաստիկ կազմով, փաստաթղթերի ամրացումը մետաղական կապիչի օգնությամբ:
5.	Թղթապանակ (ֆայլ)	Թափանցիկ պոլիէթիլենային թաղանթից, A4 (210x297) մմ ձևաչափի թերթերի համար, արագակարներին ամրացնելու համար, տուփի մեջ 100 հատ:
6.	Լազերային սկավառակ (CD)	Սկավառակ ՍԴ-Ռ 700 ՄԲ (CD-R 700 MB) հիշողության ծավալով, 52X ձայնագրման արագությամբ, պլաստիկ տուփով կամ համարժեքը:
7.	Լազերային սկավառակ (DVD)	Սկավառակ DVD-RW 4.7 Gb, առնվազն 4.7 գբ հիշողությամբ ծավալով, 52X ձայնագրման արագությամբ, պլաստիկ տուփով:

* Պարտադիր պայման է հանդիսանում ապրանքի չօգտագործված լինելը:

ԳՆՈՐԴ
ՀՀ քաղաքաշինության նախարարություն
Հասցե՝ *Կառավարական տուն թիվ 3*
հհ *900011014397, ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական գանձարան*
հվհհ *02568027*
_____ Ս. Բաղդասարյան
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Անթ Հիլլ» ՍՊԸ
Հասցե՝ *ք.Երևան, Նալբանդյան 1 շենք, բն.34*
հհ *19300327314401001 «Գազպրոմբանկ» ՓԲԸ*
հվհհ *00254056*
_____ Տ.Զոհրաբյան
Կ.Տ

Հավելված 2
«04» 12 2012թ.
N ՀՀ ՔՆ ԲԸԱՀ-ԱՊՁԲ –12/18 ծածկագրով գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Կառավարման տարածքային մարմնի անվանումը՝ *ՀՀ քաղաքաշինության նախարարություն*
Իրականացվող ծրագիրը՝ *01. 22 կառավարության պահուստային ֆոնդ, Բաժին 11, խումբ 01, դաս 01*
Ծրագիրն իրականացնող հիմնարկի անվանումը՝ *ՀՀ քաղաքաշինության նախարարություն,*
հասցեն՝ *ք.Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3*
Ապրանքի անվանումը՝ Գրասենյակային նյութեր և հագուստ

հազ.դրամ

h/h	Գնման ենթակա ապրանքների			Նախատեսվում է գնել 2012թ.								Ընդամենը	
	Անվանումը	Չափի միավորը	Միավորի գինը	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ			
				Քանակ	Գումար	Քանակ	Գումար	Քանակ	Գումար	Քանակ	Գումար	Քանակ	Գումար
Ա	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
1	Կրիչ (ֆլեշ 16GB)	հատ	13.0		0.0		0.0		0.0	4	52.0	4	52.0
2	Թուղթ օֆսեթային	կգ	0.7		0.0		0.0		0.0	50	35.0	50	35.0
3	Թղթապանակ ռեգիստրատոր	հատ	0.5		0.0		0.0		0.0	50	25.0	50	25.0
4	Թղթապանակ պլաստիկ	հատ	0.2		0.0		0.0		0.0	30	6.0	30	6.0
5	Թղթապանակ (ֆայլ)	հատ	0.02		0.0		0.0		0.0	200	4.0	200	4.0
6	Լազերային սկավառակ (CD)	հատ	0.12		0.0		0.0		0.0	35	4.2	35	4.2
7	Լազերային սկավառակ (DVD)	հատ	0.25		0.0		0.0		0.0	35	8.75	35	8.75
	ԸՆԴԱՄԵՆԸ										134.95		134.95

ԳՆՈՐԴ
ՀՀ քաղաքաշինության նախարարություն
Հասցե՝ ք.Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3
հհ *90001101435* *ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն*
հվհհ *02565027*
_____ Մ.Բաղդասարյան

ՎԱՃԱՌՈՂ
«Անթ Հիլլ» ՍՊԸ
Հասցե՝ *ք.Երևան, Կասյան 1 շենք, բն.34*
հհ *19300327314401 00 «Կոնվերսբանկ» ՓԲԸ*
հվհհ *02254055*
_____ Տ.Զոհրաբյան
Կ.Տ.

Հավելված 3
«06» 12 2012թ. կնքված
N ՀՀ ՔՆ ԲԸԱՀ-ԱՊՁԲ-12/18 ծածկագրով գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Կառավարման տարածքային մարմնի անվանումը՝ ***ՀՀ քաղաքաշինության նախարարություն***
Իրականացվող ծրագիրը՝ ***01. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ, Բաժին 11, խումբ 01, դաս 01***
Ծրագիրն իրականացնող հիմնարկի անվանումը՝ ***ՀՀ քաղաքաշինության նախարարություն***
հասցեն՝ ք. Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3

Ապրանքի անվանումը՝ ***Գրասենյակային նյութեր և հագուստ***

հազ. դրամ

հ/հ	Ձեռք բերվող ապրանքի անվանումը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակարգման հոդվածը	Նախատեսվում է ֆինանսավորել Հայաստանի Հանրապետության 2012 թվականի պետական բյուջեից, ըստ ամիսների՝ ընդ որում			
			հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը տարի
ա	1	2	3	4	5	6
1.	Կրիչ (ֆլեշ 16GB)	4261	-	-	52.0	52.0
2.	Թուղթ օֆսեթային	4261	-	-	35.0	35.0
3.	Թղթապանակ ռեգիստրատոր	4261	-	-	25.0	25.0
4.	Թղթապանակ պլաստիկ	4261	-	-	6.0	6.0
5.	Թղթապանակ (ֆայլ)	4261	-	-	4.0	4.0
6.	Լազերային սկավառակ (CD)	4261	-	-	4.2	4.2
7.	Լազերային սկավառակ (DVD)	4261	-	-	8.75	8.75
	ԸՆԴԱՄԵՆԸ				**134.95**	**134.95**

ԳՆՈՐԴ

ՀՀ քաղաքաշինության նախարարություն
Հասցե՝ Կառավարական տուն թիվ 3
հհ 900011014397 ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
հվհհ 02565[illegible]

Մ. Բաղդասարյան

Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ

«Անթ Հիլլ» ՍՊԸ
Հասցե՝ ք.Երևան, Կասյան 1 շենք, բն.34
հհ 1930032731440100 «Կոնվերսբանկ» ՓԲԸ
հվհհ 00254055

Տ.Զոհրաբյան

Կ.Տ

Հավելված 4
«_____» _____ 2012թ. կնքված
N ՀՀ ՔՆ ԲԸԱՀ-ԱՊՁԲ *ծածկագրով գնման պայմանագրի*

ԱՐԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N _____
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« _____ » _____ 2012թ. ք.Երևան

Պայմանագրի անվանումը՝ ***Գրասենյակային նյութերի մատակարարման պետական գնման***

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » 2012թ.
Պայմանագրի համարը՝ _____

Գնորդն, ի դեմս ՀՀ քաղաքաշինության նախարարության աշխատակազմի ղեկավար Մ. Բաղդասարյանի և Վաճառողն՝ ի դեմս «Անթ Հիլլ» ՍՊԸ տնօրեն Տ.Զոհրաբյանի, հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրի կատարման վերաբերյալ « » 2012թ. կազմված պատասխանատու ստորաբաժանման N եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ապրանքները (այսուհետև՝ Ապրանք) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Վաճառողը « » 2012թ-ից « » 2012թ ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Ապրանքների մատակարարումը

Մատակարարման համառոտ նկարագիրը	Մատակարարման քանակական ցուցանիշները	Մատակարա-րումների ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը	_____	_____		_____

Վերոհիշյալ Ապրանքների մատակարարման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց

_____
(ստորագրություն)

ազգանուն՝ _____

Ապրանքն ընդունեց

_____
(ստորագրություն)

ազգանուն՝ _____